Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
ապրիլի 23-ի N 495 - Լ որոշման

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒ ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Սույն որոշմամբ ծրագրի շահառու ավիաընկերություններ են համարվում Հայաստանի Հանրապետությունում օդանավ շահագործողի վկայական ունեցող կամ Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում բազավորված օտարերկրյա օդանավ շահագործողի վկայական ունեցող իրավաբանական անձինք, որոնք իրականացնում են նոր ուղղություններով ուղևորների կանոնավոր առևտրային փոխադրումներ հետևյալ հաճախականությամբ՝ չվերթի մեկնարկի օրվանից IATA ամառային և IATA ձմեռային ժամանակահատվածում իրականացնում են առնվազն շաբաթական ոչ պակաս 1 չվերթ կամ համապատասխանաբար առնվազն 28 և 20 չվերթ: Նշված քանակից նվազեցվում են անհաղթահարելի ուժի հետևանքով չիրականացված չվերթերը:

2. Սույն որոշման իմաստով բազավորված են համարվում այն օտարերկրյա օդանավ շահագործողի վկայական ունեցող իրավաբանական անձինք, որոնք՝

1) ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետությունում տեղակայված մասնաճյուղ.

2) օգտագործման իրավունքով (սեփականություն կամ լիզինգ) ունեն առնվազն 2 (երկու) օդանավ, որոնք մշտապես (բացառությամբ չվերթեր իրականացնելու կամ տեխնիկական սպասարկում անցնելու ժամանակահատվածում) գտնվում են Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններից մեկում կամ մի քանիսում, և այդ օդանավերի անձնակազմները (օդաչու, սրահի անձնակազմ) աշխատում են Հայաստանի Հանրապետությունում տեղակայված մասնաճյուղում.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված օդանավերով են իրականացնում չվերթեր նոր ուղղություններով (սույն պահանջը չի կիրառվում Գյումրու «Շիրակ» օդանավակայան չվերթեր իրականացնելու դեպքում):

3. Շահառու ավիաընկերությունները սույն որոշմամբ սահմանված աջակցության ծրագրից օգտվելու համար պետք է առնվազն 1 (մեկ) նոր ուղղությամբ չվերթեր իրականացնեն Գյումրու «Շիրակ» օդանավակայան՝ սույն հավելվածի 1-ին կետով սահմանված չվերթերի հաճախականություններին ներկայացվող պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ